

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գրիգոր Նարեկացի**, Մատյան ողբերգության, Տաղեր, թարգմանություն Վազգեն Գևորգյանի. – Երևան, 1979. – էջ 26:
2. տես նույն տեղում, էջ 17:
3. նույն տեղում, էջ 140:
4. նույն տեղում, էջ 248:
5. նույն տեղում, էջ 125:
6. նույն տեղում, էջ 547:

A.V. БАГДАСАРЯН

ЛЕЧЕНИЕ С ПОМОЩЬЮ СЛОВА НАРЕКАЦИ

Исследуется “Книга скорбных песнопений” Григора Нарекаци, рассматриваемая в армянской реальности как классический пример лечения с помощью слова.

Ключевые слова: молитвенник, лечение словом, логотерапия, самопознание, смысл жизни.

A.V. BAGHDASARYAN

NAREKATSI'S WORDTHERAPY

The “Book of Lamentation” by Gregor Narekatsi, which is considered a classical example of Wordtherapy in the armenian reality is studied.

Keywords: prayer book, wordtherapy, logotherapy, self-recognition, life meaning.

ՀՏԴ 316.42 (1-2) (564.3)

Ա.Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Կիպրոս կղզու քաղաքական պատմության լույսի ներքո դիտարկվում է կղզում հայ համայնքի քաղաքական իրավիճակը: Կիպրոսի հայ համայնքը իր հաստատուն տեղն է զբաղեցնում կղզու հույն ազգաբնակչության շրջանում, վայելում է նրա հարգանքը և ակտիվ մասնակցություն ցուցաբերում երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում:

Առանցքային բառեր. Կիպրոսի հայ համայնք, Թուրքիա, հակամարտություն, հույն բնակչություն, կղզու բռնազավթում:

Դեռ վաղ ժամանակներից Կիպրոս կղզին ունեցել է բուռն քաղաքական պատմություն իր եզակի աշխարհագրական դիրքի պատճառով: Կղզին Սուեզի ջրանցք տանող ծովային ճանապարհները վերահսկելու հնարավորություն է տալիս, ինչով պայմանավորված են նրա շուրջ ծավալվող իրադարձությունները:

Թուրքերը նվաճել են Կիպրոսը վենետիկցիներից 1571թ., որից հետո կղզու բնակչության կազմում հայտնվում է թուրքական տարրը: Նախկինում Կիպրոսում միայն հույներ, իտալացիներ և հայեր էին ապրում /հայերը հիմնականում կղզի էին գաղթել Կիլիկիայի կործանումից հետո/ [1]:

Կիպրոսի հակամարտությունը սկզբնավորվում է 19-րդ դարի սկզբից, երբ Հունաստանը սկսեց պայքար անկախության համար և ազատվեց Օսմանյան լծից 1829թ. Ադրինապոլիսի պայմանագրով [2]:

1878թ. հունիսի 4-ին Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի և Օսմանյան կայսրության միջև կնքված գաղտնի պակտով Կիպրոսն անցավ Մեծ Բրիտանիայի հսկողության տակ: Հետագայում՝ Առաջին աշխարհամարտի սկզբին, երբ Թուրքիան դաշինքի մեջ մտավ Գերմանիայի հետ, դրան ի պատասխան՝ Մեծ Բրիտանիան զավթեց Կիպրոսը, իսկ 1923թ., Լոզանի պայմանագրի համաձայն, Թուրքիան ճանաչեց Մեծ Բրիտանիայի սուվերեն իրավունքը կղզու վրա [3]:

Կղզու հույն բնակչությունը դուրս եկավ ազատագրական պայքարի անգլիացիների գաղութային կառավարման դեմ, որն իրականացվում էր <բաժանիր, որ տիրես> քաղաքականությամբ՝ իրար դեմ հանելով կղզու հույն և թուրք բնակչությանը, որոնք խաղաղ գոյակցում էին մինչ այդ: Սադրանքները սկսեցին, երբ անգլիացիները կղզու ոստիկանության կազմում մեծ քանակությամբ թուրքեր հավաքագրեցին:

Երկրորդ աշխարհամարտից հետո էնոզիսի /միավորման/ կոչերը դարձան հաճախակի, որոնք հիմնականում բարձրացվում էին ՄԱԿ-ի ամբիոնից, սակայն քննարկման առարկա չէին դառնում անգլիացիների ջանքերի պատճառով:

Էնոզիսի շարժումը լայն թափ ստացավ գեներալ Գրիվասի ղեկավարությամբ: Բրիտանական կառավարությունը, չկարողանալով դիմադրել Կիպրոսում բռնկված ազգային ազատագրական շարժմանը, սկսեց գործողության մեջ դնել թուրքական գործոնը և խրախուսել Անկարայի միջամտությունը: Անգլիացիների թելադրանքով կիպրացի թուրքերը մերժեցին միավորումը Հունաստանի հետ, որից հետո 1974թ. հուլիսի 20-ին սկսվեց թուրքերի կողմից կղզու բռնազավթումը:

Երկար տարիներ գտնվելով Բյուզանդիայի, խաչակիրների, Վենետիկի, Թուրքիայի տիրապետության տակ և 1878 թ.-ից մաս կազմելով բրիտանական գաղութային կայսրությանը, Կիպրոսը անկախություն ստացավ միայն 1960թ.:

1974թ. հուլիսին Կիպրոսում կատարվեց պետական հեղաշրջում Աթենքի զինվորական խումտայի աջակցությամբ, միավորման («էնոզիս»[4]) նշանաբանի տակ, որը պահանջում էր Կիպրոսը միավորել Հունաստանին:

Օգտվելով ստեղծված իրադրությունից՝ Թուրքիան կղզի մտցրեց իր զորքերը, պատճառաբանելով այն սահմանադրական կարգուկանոնի վերականգնման և թուրք կիպրացիներին պաշտպանելու անհրաժեշտությամբ, որի հետևանքով գրա-

վեց Կիպրոսի տարածքի 37 տոկոսը [5]: 1975 թ. Թուրքիայի կողմից գրավված տարածքում հռչակվեց «Կիպրոսի Թուրքական Դաշնային Պետությունը, ինչը դատապարտվում էր ՄԱԿ-ի ԱԽ կողմից, և կոչ էր արվում միջազգային հանրությանը չճանաչել ինքնակոչ հանրապետությունը: ՄԱԿ-ի բանաձևերի համաձայն՝ Կիպրոսի հարցի կարգավորումը պետք է հիմնվի երկհամայնք դաշնային կառույցի վրա, մեկ ընդհանուր իշխանությամբ և մեկ քաղաքացիությամբ [6]: Պետության ղեկավարը՝ նախագահը, հույն կիպրացի է, փոխնախագահը պետք է լինի թուրք կիպրացի: Յուրաքանչյուրին պետք է ընտրի համապատասխան համայնքը 5 տարի ժամկետով [7]:

Կիպրոսի Հանրապետությունը զբաղեցնում է 9.250 քառ. կմ, որից 3.355 քառ. կմ հայտնվել է Կիպրոսի թուրքական մասում: Կղզու ազգաբնակչությունը կազմում են. հույն կիպրացիներ՝ 85.2%, թուրք կիպրացիներ՝ 11.69%, Երկրի պետական տոնը Անկախության օրն է՝ հոկտեմբերի 1-ը [8]:

Գործադիր իշխանությունն իրականացնում են նախագահը և փոխնախագահը՝ իրենց կողմից ձևավորված Նախարարների խորհրդի միջոցով, ընդ որում, սահմանադրության համաձայն, Երկուսն էլ օգտվում են վետոյի իրավունքից: Օրենսդիր իշխանությունը պատկանում է Ներկայացուցիչների պալատին, իսկ պատգամավորներն ընտրվում են 5 տարի ժամկետով [9]:

Թուրքական ներխուժման հետևանքով տուժեցին նաև Կիպրոսի թուրքական հատվածում մնացած հայկական եկեղեցական հուշարձանները, որոնցից կարելի է հիշատակել Սբ. Մակար պատմական վանքը, որը վեր է ածվել կաթոլիկայի: Մինչ Կիպրոսի հյուսիսային մասի բռնազավթումը թուրքերի կողմից՝ եկեղեցին համարվում էր Կիպրոսի հայ համայնքի սիրված վայրերից մեկը:

Եկեղեցու ձեռագիր մատյաններն ու սրբապատկերները թալանվել ու վաճառվել են, միայն Կիպրոսի Հանրապետության, հայ եկեղեցու և միջազգային կառույցների համատեղ ջանքերի շնորհիվ հնարավոր է եղել կանխել միջազգային իրավունքի հիշյալ կոպիտ ոտնահարումը [10]:

2003 թ. ապրիլի 16-ին Կիպրոսի Հանրապետությունը Աթենքում ստորագրեց Եվրոպական միությանն անդամակցելու պայմանագիրը, իսկ 2004 թ. մայիսի 1-ին դարձավ ԵՄ լիիրավ անդամ [11]: Պետք է ընդգծել, որ կղզու թուրքական հատվածը չանդամակցեց ԵՄ-ին:

Հայաստանի ու Կիպրոսի միջև կան շատ ընդհանրություններ. նման են ոչ միայն երկու երկրների անցյալն ու առկա հիմնախնդիրները (ցեղասպանություն, նույն հակառակորդ երկիրը, երկու մասի բաժանված Կիպրոս և այլն), նաև ապագան կերտելու հաստատուն վճռականությունը, այդ թվում՝ Եվրոպական ինտեգրման գործընթացը և այդ համամարդկային արժեքներին դավանելը:

Կիպրոսում բազմաճյուղ հայ համայնքի և եկեղեցական կազմակերպության գոյությունը հաստատող առաջին վկայությունը վերաբերվում է XII դ. երկրորդ կեսին:

Ըստ 1901 թ. մարդահամարի տվյալների՝ Կիպրոսում կային ընդամենը 563 հայեր: Հայության առավելագույն ներհոսքը Կիպրոս արձանագրվել է 1915-20 թթ., երբ կղզի են ներգաղթել շուրջ 7000 հայեր:

Ներկայումս կիպրահայերի թիվը կազմում է շուրջ 2700 անձ, այլ տվյալներով՝ 2000-ից ոչ ավելի, որոնք հիմնականում բնակվում են Նիկոսիայում, Լաոնակայում և Լիմասոլում [12]:

Կիպրոսի հայ համայնքը ներկայացված է Կիպրոսի խորհրդարանում պետական ներկայացուցչով, որն ընտրվում է ներհամայնքային ընտրությունների հիման վրա: Կիպրոսի Ներկայացուցիչների պալատում հայ համայնքի նշանավոր ներկայացուցիչներից էր Պետրոս Քալայջյանը [13]:

Համայնքը ղեկավարվում է թեմական և ազգային-վարչական մարմինների միջոցով: Համայնքում գործում են սփյուռքի ավանդական կազմակերպությունները՝ իրենց կառույցներով, կրթական, մշակութային, մարզական հաստատություններով:

Կիպրահայ համայնքը ղեկավարվում է թեմական խորհրդի կողմից, որը բաղկացած է 9 հոգուց, որոնցից մեկը հոգևոր առաջնորդն է, մյուսները՝ ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի և ՀՅԴ-ի ներկայացուցիչները [14]:

Կիպրոսի հայ թեմի առաջնորդարանը, որը պատկանում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը, գլխավորում է կաթողիկոսական փոխանորդը: Գործում է Կիպրոսի Հայոց վարչական ժողովը [15]:

Կիպրոսում բնակվող մեր ազգակցուհին (տիկին Մարին) Հայաստանի Հանրապետությանը որպես սեփականություն էր կտակել Նիկոսիայի իր մեծարժեք կավածքը՝ Հյուսիսային Կիպրոսում գտնվող ընդարձակ երկու հողատարածքները [16]: Հետագայում Հայաստանին է նվիրաբերել նաև հանգուցյալ քրոջ կողմից պատրաստված հարյուրավոր ձեռագործ աշխատանքներ, որոնք ներկայումս ցուցադրվում են Հայաստանի Ժողովրդական արվեստի թանգարանում:

Կիպրոսի Լաոնակա քաղաքում կանգնեցվել է առաջին հայ գաղթականներին նվիրված հուշարձան, որի մտահղացումը համայնքի անդամ Պետրոս Քալայջյանինն էր, և որի իրականացման նախաձեռնողներն էին Կիպրոսի հանրապետության և խորհրդարանի նախագահները: Այն կառուցվեց քաղաքի ծովափնյա գոտուն հարող տարածքում, ուր 1915 թ. հետո առաջին անգամ ոտք են դրել Կիպրոսում հանգրվանած հայ գաղթականները [17]:

Կիպրոսի կառավարությունը շահագրգիռ է պահպանելու Մելքոնյան վարժարանը, որը դիտվում է որպես առավել լայն կրթական ծրագրերի մաս, նոր համալսարաններ են հիմնադրվելու Լիմասոլում, Նիկոսիայում: Անկախ ներհայկական վեճերից, Կիպրոսի կառավարությունը պահպանում է հայ համայնքին պատկանող

տարածքները և շինությունները որպես պատմական արժեք, որի համար Կիպրոսի խորհրդարանը ընդունել է բանաձև, իսկ կառավարությունը՝ համապատասխան որոշում:

Կիպրացի պաշտոնյաները մի շարք առիթներով հավաստիացրել են, որ Կիպրոսի իշխանությունը վճռական է պահպանելու հայկական կրթական հաստատությունների գործունեությունը և նրանց տարածքների անձեռնմխելիությունը՝ որպես կղզու հոգևոր ժառանգության կարևոր և անքակտելի մաս: Ըստ Նիկոսիայի քաղաքագլխի, Մելքոնյան վարժարանը սոսկ հայկական հաստատություն չէ և չի կարող տարանջատվել Կիպրոսի պատմությունից [18]:

Կիպրոսի խորհրդարանական ընտրություններում հայ համայնքի ներկայացուցիչները ակտիվ մասնակցություն են ունենում, ներգրավվելով տարբեր կուսակցական ցուցակներում, օրինակ՝ 2005թ. ընտրություններում Կիպրոսի Ժողովրդական կուսակցության (ԴԻԿՈ) ներկայացուցիչ հայազգի Մարիո Կարոյանը, որը մինչև այդ Կիպրոսի նախագահի մամլո խոսնակն էր: ԱՔԵԼ (կոմունիստական) կուսակցության կողմից ներկայացվել է Մերութան Սարգսյանը (նախկինում ՀՀ քաղաքացի) [19]:

Այսպիսով, Կիպրոսի հայ համայնքը իր հաստատուն տեղն է զբաղեցնում կղզու հույն ազգաբնակչության շրջանում, վայելում է նրա հարգանքը և ակտիվ մասնակցություն ցուցաբերում երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Луковец А.И.** Кипр вчера и сегодня: Из блокнота журналиста. -М., 1974. - С. 56.
2. **Ավետիսյան Գ.,** Կիպրոսի Հանրապետությունը. - Երևան, 1975. - էջ 6:
3. **Луковец А.И.** Кипр вчера и сегодня: Из блокнота журналиста. - М., 1974. - С. 57.
4. հուն. *enosis*՝ միություն, միավորում: Հունաստանի վերամիավորման շարժումը ծագել է 1830 թ. հունական անկախ պետության կազմավորումից հետո, երբ հունական հողերի մի մասը մնաց Օսմանյան կայսրության կազմում:
5. Տես ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, Ցուցակ 11, գործ 31, էջ 18:
6. Տես նույն տեղում, գործ 31, էջ 19:
7. Տես նույն տեղում , գործ 38, էջ 20:
8. Տես նույն տեղում , գործ 31, էջ 16-17:
9. Տես նույն տեղում , գործ 38, էջ 22:
10. Տես նույն տեղում , գործ 38, էջ 6:
11. Տես նույն տեղում , գործ 31, էջ 21:
12. Տես նույն տեղում , Ցուցակ 11, գործ 38, էջ 29:
13. Տես նույն տեղում , գործ 38, էջ 28
14. Տես նույն տեղում , գործ 38, էջ 30:
15. Տես , նույն տեղում գործ 38, էջ 34:

16. Տես նույն տեղում, գործ 38, էջ 7:
17. Տես նույն տեղում, գործ 38, էջ 50:
18. Տես ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, Ցուցակ 10, գործ 40, էջ 24:
19. Տես ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, Ցուցակ 11, գործ 38, էջ 4:

Ա.Ա. КАРАПЕТЯН

АРМЯНСКАЯ ОБЩИНА КИПРА

Остров Кипр имеет бурную политическую историю, которая обусловлена его географическим расположением и, как следствие, непрерывным вмешательством во внутренние дела острова. Армянская община Кипра занимает свое непосредственное место в греческом/кипрском государстве, обладает авторитетом и активно вносит свою лепту в дело становления социально-экономической, политической, культурной жизни государства.

Ключевые слова: армянская община Кипра, Турция, конфликт, греческое население, оккупация острова.

A.A. KARARAPETYAN

ARMENIAN COMMUNITY OF CYPRUS

The island of Cyprus has had a turbulent political history due to its geographical location, and as a consequence of the continuous interference in the internal affairs of the island. The Armenian community of Cyprus is directly engaged in the circle of basic activities of Cyprus, is respected as a local society and actively contributes its abilities for the future development of socio-economic, political, cultural life of the state.

Keywords: Armenian diaspora of Cyprus, Turkey, conflict, Greek population, occupation of the island.